



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 3 - Ա
13 հունվարի 2014 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011
ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3 - Ի N 72 - Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի նոյեմբերի 3-ի «Հանձնաժողով ստեղծելու մասին» N 72-Ա կարգադրության 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

« 1. Ստեղծել թմրաբիզնեսի և թմրամոլության դեմ պայքարի հանձնաժողով հետևյալ կազմով՝

- Մանուկյան Մ. - մարզպետի տեղակալ, նախագահ
- Մելքոնյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
- Բադալյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
- Ասատրյան Ի. - մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ
- Պետրոսյան Տ. - ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության պետի տեղակալ՝ օպերատիվ գծով /համաձայնությամբ/
- Գալոյան Մ. - մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ
- Շահբազյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ
- Այվազյան Մ. - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի վարիչ
- Զիչոյան Հ. - «Գավառի պոլիկլինիկա» ՊՓԲԸ տնօրեն
- Կոստանյան Ա. - ՀՀ ԱԱ ծառայության Գեղարքունիքի մարզային վարչության ավագ օպեր ծառայող /համաձայնությամբ/>>:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ռ. Գրիգորյան

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ